Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖՏ 2018.

Ազատան համայնքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղադրման ծրագրի բացման հանդիսավոր արարողությունը

2019 թ. մարտի 7-ին Շիրակի մարզի Ազատան գյուղում տեղի ունեցավ «Ազատան համայնքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղադրման ծրագրի» 64,218 ԱՄՆ դոլար (7,192,416 ճապոնական իեն) արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի եզրափակման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադան, ինչպես նաև «Եվրասիա» բարեգործական հասարակական կազմակերպության (ԲՀԿ) նախագահ պարոն Նվեր Թորոսյանը, Շիրակի մարզպետ պարոն Տիգրան Պետրոսյանը, Ազատան համայնքի ղեկավար պարոն Վարդան Իկիլիկյանը, շահառու ԲՀԿ-ի անդամները և գյուղի բազմաթիվ բնակիչներ:

Ծրագրի նպատակն էր Ազատան գյուղում կառուցել արևային էլեկտրակայան (70 կՎ) և մաքուր էներգիա մատակարարել համայնքի բոլոր խոշոր հասարակական կառույցներին: Նոր էներգետիկ համակարգը հնարավորություն կտա քաղաքապետարանին ինքնուրույն կերպով բարելավել համայնքային ենթակառուցվածքները՝ խնայված էլեկտրաէներգիայի ծախսերով, բացի այդ թույլ կտա բնութագրել գյուղը որպես «էկո գյուղ»: Այս համակարգի տեղադրումը կնպաստի գյուղում 1100 շահառուի:

Նշում. Հայաստանի կառավարությունը ջանքեր է գործադրում վերականգնվող էներգիայի առաջխաղացման համար՝ որպես 2014-2015 թվականների զարգացման ռազմավարության կարևորագույն քաղաքականություններից մեկը, էներգիայի ինքնաբավության մակարդակը բարելավելու համար: Մասնավորապես, Հայաստանը

ունի արևային էներգիայի զգալի ներուժ: Ըստ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության՝ արևային էներգիայի հոսքի միջին տարեկան քանակը հորիզոնական մակերևույթով մեկ քառակուսի մետրի համար շուրջ 1720 կՎտժ է, ինչը բարձր է Եվրոպայի միջին մակարդակից (մոտավորապես 1000 կՎտժ): Հատկապես, Շիրակի մարզը և Ազատան գյուղը համարվում են արևային էլեկտրաէներգիայի արտադրության համար բարենպաստ պայմաններ ունեցող տարածքներ, քանի որ դրանք ունեն միջինում տարեկան 320-ից ավելի արևոտ օրեր և ակնկալվում է, որ ավելի շատ արևային համակարգեր կստեղծվեն այս տարածաշրջանում:

Դեսպան Յամադային դիմավորեցին ավանդական ողջույնի արարողությամբ

Դեսպան Յամադան և «Եվրասիա» ԲՀԿ-ի նախագահ պարոն Թորոսյանը կտրում են ժապավենը

Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը

Դեսպան Յամադայի լուսանկարահանումը Շիրակի մարզպետի, Ազատան համայնքի ղեկավարի և «Եվրասիա» ԲՀԿ-ի նախագահի հետ